

ՄԱՄՈՒՆԵՐԻՑ ՄԱՔՐՎՈՂ ՌՏՆԱՀԵՏՔԵՐ

Եղիշե Զարենցի ծննդավայրում պոնտի անվամբ հայկական մշակութային կենտրոն հիմնադրելու խնդրով 2007թ. մարտի 11-14-ը կարս մեկնեց նախաճանոնդրի խումբը՝ Մարտին Թաղևոսյանի գլուխավորությամբ։ Խմբում էին Սօգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, գեղանկարիչ, դիզայներ Սամվել Սևադան և տողերիս հեղինակը։

Հասցեն այլս որոշակի էր, մնում էր հովանավորի հետ տեղում վերջնական պայմանավորվածությունը։ Եվ ահա մի նոր այց՝ դարձյալ պոնտի ծննդյան օրերին։ Եվ այս այցն արդեն Զարենցի հայրական տունը թուրքահաստակ հայ բարերարի միջոցներով ձեռք բերելու ճանապարհին կոնկրետ քայլերի, բանակցությունների այց էր։

Մենք կանգնած ենք քաղաքային այգին Էրգրումի փողոցին կապող երկայթն կամրջի վրա, և ճիշտ մեր դիմաց տունն է՝ Զարենցի՝ տունը։ Նկարահանում ենք, լուսանկարում, արտասանում չարենցյան տողեր։ Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, ով մեր կարսում եղած օրերին ինձ համար նորովի բացահայտվեց, այսպես ասեմ՝ իր չարենցիմացությամբ, տեսնելով, որ մեր շուրջը մարդիկ են խմբված, մեր թարգմանչին խնդրում, թե ստիպում է, որ նրանց համար թարգմանի իր արտասանած քառատողը։ »Թողած կարսը, կարսի այգին, /Տունս՝ շինած անտաշ քարով...«։ Հետո ոգևորվեց, շատ ոգևորվեց և »Խմբապետ Շավարշը« ծայրե ծայր արտասանեց՝ մի տեսակ չարենցյան զերեկույթ սարքելով հավաքվածների գլխին, որոնք մեկ թարգմանչին, մեկ իրեն էին նայում ոչինչ չհասկանալով, իսկ թարգմանչին էլ, տեսավ, որ հայութ արտասանությունն այդ արագությամբ թարգմանելու ի վիճակի չէ, դադար տվեց։ Երեկ գիշերվա՝ Զարենցի ծննդյան քննից Դավիթի տրամադրությունը մի քիչ ծիրան-ծիրան էր, որից էլ ձայնը մի քիչ խոպու էր հնչում՝ իսկը խմբապետ Շավարշի հոլորտանքին սազական։ Դավիթը ավարտեց »իր զերեկույթը«, հասկանալի է՝ ծափերի չարժանացավ և մոլոր քայլերով անցավ դեպի Զարենցի հայրական տան հարևանությամբ գտնվող քաղաքային զբոսայգի։ Խենթի՝ պահվածք էր։ Թերևս։ Բայց այնտեղ բոլորս էինք խենթ։ Մեր խմբի ղեկավար Մարտին Թաղևոսյանը խենթ չէ, որ այս էլ քանից գնաց-նկավ՝ մինչև գտավ Զարենցի հայրական տան ճիշտ հասցեն, մինչև իրականացրեց այդ տունը, այսպես ասած, »մենքնով անելու« լիով։

Դավիթը, ծափերի փոխարեն, մեր շուրջը հավաքված քրդերի հետաքրքրությունն ու զարմանքն ստացավ՝ թե՞ն ի՞նչ կար այդ կիսաքանդ պատերի մեջ, որ մենք այդպես ակնածանքով շոշափում ենք ամեն քայլ։ Նրանց ասած այդ »կիսաքանդ պատըք«, սակայն, Աքզար աղայի տան որմն է՝ մի ողջ դար ուսած, մասունք, որի ներքո ապրել է Աքզար աղան, ապրել է Զարենցը։ Այդ պատը գոնե մի ծվեն պահում է Զարենցի կյանքի պատմությունից, դրա համար է, որ մենք հոգմունքով ենք շոշափում այդ կիսավեր պատի խունացած քարերն ու հնաբույր դուրը։ Մեր այդ հայացքի, այդ հոգմունքի ու այդ վերաբերմութի մեջ Զարենցի մանկության օրերի, պատմական հայրենիքի հանդեպ տածած սիրո և վնրիուշի զգացումն է անթենդված։ Եվ՝ տեսլականը »Էն կորած երկրի«։ Մենք ուշացած, շատ ու ուշացած, եկել էինք գտնելու այդ կորցրածը։ Եվ գտանք։ Գտանք ու մեր հիացմունքն էլ, ոգևորությունն էլ այնքան հայութ էին, այնքան անսրող, որ տանտեղ կարգվածների մեջ արթնացավ սակարկելու ցանկությունը։ Մենք՝ միամիտներս, այնքան բացահայտ ապրումների մեջ էինք Զարենցի ոգեղեն կերպարի նկարագրության ու այդ տունը մշակութային կենտրոնի վերածելու ցանկության մեջ, որ նրանք անմիջապես որսացին պահը՝ սակարկումների մեջ չափն անցան, գինը քառապատկեցին։



Քաղաքապետարանի պաշտոնյանների համար սա սովորական մի անբնակ շինություն է: Նրանք սկզբում պարզապես զարմանում էին, թե մենք ինչո՞ւ այդքան մեծ նշանակություն ենք տալիս այդ կիսավեճ շինությանը: Փոխադարձապետ (քաղաքապետը բացակայում էր քաղաքից) Գուկուն Ուլիմանը նույնիսկ հարցրեց. »Կարսում շատ կան հայերի տներ, որոնք չեն քնակեցվում, բայց պահպանված են, անգամ շրնջության հասնող տեսք ու պայմաններ ունեն, ինչո՞ւ նք դուք հենց այս ավերակի վրա կանգ առնեք:«:



Երբ շարենցյան ասմունքով համեմված բացատրվեց իրողությունը, երբ ասվեց, որ այդ ավերակի վրա վեր է հառնելու նրկիարկանի մի շինություն, որի առաջին հարկը կարսեցին նրի համար կծառայի որպես թեյարան, փոխադարձապետն անյաքույց ոգևորություն ցուցաբերեց. »Ձեր ձեռնարկումի շնորհիվ այդ տարածքը բարեկարգ տեսքի կգա, և քաղաքը կունենա մի գնդեցիկ շինություն«: Նա ներականներին հանձնարարեց՝ հնարավորինս աջակցել, որ փոխադարձ շահավետ գործարք կնքվի:

Թուրքիայի օրենքներով օտարենրկրացին իրավունք չունի սեփականություն ձեռք բերել այդ նրկում, և կարսի քաղաքապետ Նահիֆ Ալիբեյօղլին, որ բավականին բարեհած վերաբերմունք

ունի հայերի հանդեպ, մեր նախորդ այցին ինքն էր հուշել նլքը՝ գտնել թուրքահպատակ բարերար, որ հանձն առնի զնել տունը:



Մարտին Թադևոսյանն ուներ հայ բարերար լնկեր՝ հանձին ստամբուլաբնակ Տիգրան Ալթունի: Եղիշն Զարենցի հանդեպ խորին ակնածանք տածող Տիգրանը նախաձեռնող խմբին լիազորնց իր անունից քանակցություններ վարել քաղաքապետարանում, ինչն էլ արվեց: Քաղաքապետարանը տան վերակառուցման առումով որևէ պայման չի դնում: Մնացածը մեր անելիքն է:

Սա առաքելություն էր, Զարենցի ուժահետքերի որոնում, որի արդյունքում ստամբուլաբնակ Տիգրան Ալթունը գնում է այդ տունը, Կարսի քաղաքապետարանն իր հերթին այդ տունը դասում է քաղաքի պատմամշակութային հուշարձանների շարք՝ թույլտվություն տալով տունը վերանորոգել և օգտագործել իբրև Եղիշն Զարենցի անվան հայկական մշակութային կենտրոն: Սա նաև հրաշք մի իրողություն էր, մեծ պոետի մասունքներից մեկը փրկելու փառահենդ մի քայլ:

Երից օրինյալ է այս ձեռնարկումի իրականացումը, որի շնորհիվ »խնագար ու հավիտյան վտարանդի« պոետի տունը դառնում է մշակութային կենտրոն, դառնում մեր նոր ուստատեղին՝ այլևս բաց ու շարունակական պահելով այցելության մեր ճանապարհը:

Ծարունակելի